


9.524fusely ll. fuch.

Чистоъ ф. агент док
міжнародні позиції які
бюро відповідь та підприєм
зупин - відповідь:



ՀԱԳԵՐԵՐ 1999

Դ ԱԳԱԲԻ ՄՈՀ ԱՆՁՈՒԹՅԱՆ ԲՈՐԵՐՈԲԵԿ ԻՒՐԱՅ

ԿՈՄՍ ՄԻՔԱՅԵԼ ՏԱՐԻԵԼԵԱՆ

ՀՕՐԻՄ-ՄԵԼԻՔԵԱՆՑ



~~7-1889~~ 1889 ԱՐԵ

Ի ԱՐՄԵՆԻ ԺԱԿԱՆԱՅԻ ԶՄԵԿԵԱՆՑ

卷之三

ԹԻՖԼԻՍ

ՅՈՒՆԵԱԾ ՄԱՐՏԻՐԱՍԵՎԱՅԻ ՏԳԵՐԱԿ
ՕՐԵԼԵԱԿ ՓՈՂՈՑ, Տ. 1/2

1859


L5A
1632

ՀԱԳՆԵՐԻ

Դ ՍԴԱԼԻ ՄԱՀ ԱՆՁՈՒԹՅԱՆ ԲԱՐԵՐԱՐԻՆ ԻՒՐՈՑ

ԿՈՄՄ ՄԻՔԱՅԵԼ ՏԱՐԻԵԼԵԱՆ

ԼՕՐԵԱ-ՄԵԼԻՔԵԱՆՑ



Դ ՍԻՄԵՈՆ ԺԱԿԱՆԱՅԻ ԶՄԵԿԵԱՆՑ

41632-60

29 1638



Հոաքել լայր զորդիս իւր՝ և ոչ
կամէր միսիթարել, զի ոչ էին:
Սատ. բ. գլ. 18 հմր.

Այս ինչ տեսարան՝ հանդէս սղալի՝
Թշուառիս աչաց՝ հանդէպ երևի՝
Պատերազմ է սա ահեղ սոսկալի.
Թաղթանակ փառաց՝ քաջազուն գնդի:

Թէ պատերազմ՝ ուր է զօրավար,
Ո՞ւր է քաջամարտ՝ զօրաց ղեկավար՝
Ո՞ւր է հրամանատարն Կովկասեան գնտին՝
Յորմէ զարհուրեալ՝ փախչէր թշնամին:

Ո՞ւր են հետեակ՝ քաջ զօրքն թուսաց,
Որոց խրախուսեալ՝ մղէր պատերազմ.
Ո՞ւր են հեծելազօրքն քաջամարտկաց՝
Որք խիզախելով՝ դիմէին յառաջ:

Թէ յաղթանակէ՝ ուր է զօրավար.
Որ փառաց սլամակ՝ դնէր ՚ի ճակատ.
Ո՞ւր են՝ ռազմական դրոշակիր քաջեր՝
Որ ահեղ թնդմամբ՝ զյաղթանակ գովէր:

Դозволено цензурою. Тифлисъ, 17 Февраля 1889 года.

Типог. И. Мартиросианца, на Орб. ул., д. № 1/2.

Ուր են փողահար թմբկահար դօրքեր,
Որ ահեղ թնտմամբ դօրս իրախուսէր.
Ուր է այն չերոսն Լօրս Մէլիքեան
Զորս՝ ահեղ դռչմամբ մղէր ի ճակատ:

Ո՞հ աւաղ անձիս՝ եղուկ խղճալւոյն՝
Զի անզոյք բարերարն իմ դնի անշունչ.
Զօրապետն լաղթող դնի ՚ի տապաստ,
Քաջազուն դօրք իւր՝ կան անձայն ՚ի սուգ:

Մահն անողորմ՝ կտրեաց զկենաց թել,
Անդարման ցաւօք պաշարեաց անել.
Անփարատ միզով պատեցաւ Կովկաս՝
Զի օր տրտմութեան և սգոյ եհաս:

Զօրքն արքունի՝ կարեվէր վշտօք.
Ոլբան և սգան թախծաղին դիմօք:
Զյաղթանակ մարտին՝ ՚ի սուգ փոխարկեալ՝
Քաջազուն դօրք իւր՝ որտաքել եղեալ:

Փողահարք մարտի՝ ողբաձայն հընչեն.
Զօրք և զօրավարք՝ թախիծս հառաչեն,
Դրոշակիր քաջեր թալկացեալ ձեռօք՝
Ոչ ևս ծածանին դրոշակը ՚ի բաց օդ:

Հաւատարիմ զօրքն՝ հոգւով սիրավառ.
Զօրապետն իւրեանց՝ տանին ՚ի դամբան:
Թնդմամբ հրացանից ահեղից եռեակ,
Զդիակ քաջին՝ իջնուն ի զնդան:

Ահեղ որոտմամբ՝ տան վերջին հրաժեշտ՝
Եւ զդիակ քաջին՝ տան հողոյն պահեստ.
Այն ահեղ թնդմունք և բոմբիւնք զինուց
Չփարատեցին վիշտք հայ ժողվրդոց:

Ճատ խոր էր տարածվել՝ հայ ազգի սրտում.
Այն կոկիծն ու ցաւ՝ անողորմ մահուն.
Էլի շատ տարիք՝ հայեր պիտի լան՝
Որպէս Խորակէլ լալը՝ Յուկա Մակաբայն:

Ով դու անողոք մահ անզութ և չար՝
Որ բիւր բիւր սրտեր՝ արեր՝ վշտահար.
Ասա ինչ անուամբ դու վստահար.
Կորզել մեր ձեռքից՝ այս միակ գոհար:

Գիտէիր՝ թ'ով էր զոհի այս անդամ,
Որին և գու պիտ՝ տանէիր խնամ
Որի հռչակը՝ ստեղծած ապագան՝
Ցիշում է աշխարհ՝ ամէն օր և ժամ:

Սա անզին գանձ էր՝ համայն մարդկութեան
Եւ փառք ու պարծանք՝ Ռուսաց տէրութեան,
Ամէն մի անհատ հայ ազգի Որդի՝
Փառք ու պարծանքով սորան կ'յիշի:

Եղել են թէ և՝ շատ զօրավարներ՝
Հայկայ սերնդից քաջ ախոյեաններ՝
Որք անմահ անուն թողել են յաշխարհ՝
Եւ իրանց անձր կնքել են անվախ:

Ամենողորմած մեծ կայսրն ոռւոաց
Ալէքսանդր երկրորդ ազատող գերեաց
Աշխարհահռչակ անուն ժառանգեաց
Հայոց խեղճ որդւոց՝ մեծ խնամք շնորհեաց:

Առաւ դրոշի տակ՝ այս խեղճուկ ազգը՝
Փարատեց նորա սրտի ողջ ցաւը.
Սիրտ առաւ հայր դիմեց ասպարէզ՝
Հոգւով և որտով նորան ծառայեց:

Դուրս եկան հայից՝ քաջ զօրավարներ՝
Արի և հմուտ՝ անձնազոհ քաշեր՝
Որք Թուսաց գահին՝ և գահակալին՝
Կեանքով և արեամբ՝ միշտ ծառայեցին:


Որք թէւ մեռան՝ մեծ անուն թողին,
Հայ ազգի անունն՝ նրանք անմահացրին.
Որոց քաջ անունք՝ ես պիտի լիշեմ.
Խնկելի անուանք՝ գովեմ փառատրեմ:

Բարձրաբերթ դղեակն՝ Ճուշուալ քաղաքի,
Սկագունդ զօրքեր պարսից արքայի,
Ոտնակոխ եղեն յերկիր կործանվան,
Ընդդէմ զօրութեան՝ քաջ Մատաթեանի:

Ամպամած սարերն լեռնական ցեղի,
Քաջ հերոսների՝ չէրքէզ ու լէկի՝
Խաւարչտին անտառք՝ խորշեր սոսկալի.
Գերեզմանք եղեն թշնամեաց գնտի:

Իշխան Արդութեանց՝ թշնամեաց վանեց.
Ճատ լեռնականներ՝ սպանեց խողխողեց.
Արծուի գրոշակը՝ սարի վրայ կանգնեց:
Եւ մեծ չերոսի՝ անուն ժառանգեց:

Յիսուն երեքի՝ կովին Թուս Տաճկաց.
Յաղթողն էր՝ իշխան Վասիլ Բէհրուդեանց.
Տաճկի՝ անհամար զօրաց Զարդ տվեց
Եւ քաջ չերոսի՝ անունն ժառանգեց:

Անառիկ բերթն Ղարսալ քաղաքի՝
Որ մտիկ տալն՝ ստրսափ կ'բերի,
Յերկիր կործանվան ի նունարհեցան.
Քաջակրու բարլոք վայազն Լազրովի:

Անաճի Ջարու տաճկական զօրքեր
Ուր Արևութար փաշայն՝ բանակ էր դրել
Անժիւ թնդանօթոք՝ փակել ամրացրել,
Խրոխտալ զօրաթեամբ Գումրի վերցնել:

Անվեհեր սրտով քաջն Ճելկովիկով
Օգնութեամբ Լազրովի՝ առաջ արշաւեց
Ալաճալ Սարը՝ արիւնով ներկեց,
Եւ Մուքտար փաշան՝ ծածուկ փախ տվեց:

Բայազտու կողմի լեռնակին քրտեր,
Անժիւ հայ գիւղեր՝ քանդել, աւերել՝
Ճէպէին շուտով՝ Երևան առնել
Արարատ դաշտը՝ արիւնով ներկել:

Քաջն Տէր Պուկասեան՝ նոցա դիմադրեց
Եւ տաճկաց զօքն՝ յաղթեց կործանեց
Բայազտու բերթը՝ զօրքով պաշարեց
Քաջ Առուլարովի՝ անուն ժառանգեց:

Իսկ դու ով՝ տաղանդ աշխարհահռչակ,
Յայտնի զօրապես՝ Թուսաց տէրութեան,
Իմաստուն անձն՝ գիտուն նախարար,
Աղնիւ վէհ հոգի՝ Տէր իմ բարերար:

Բայց քու քաջութիւնքդ՝ դիւցաղն հոգի,
Մարդկային լեզու՝ պատմել ոչ բաւ է
Դու խելքով, մտքով՝ սրտով՝ հոգւով՝
Ճատ առաջ անցար՝ ամէնքից փառքով:

Այս վերոյիշեալ անձնազոհ, քաջեր,
Քեզնով են կարգվել՝ առաջ գնացել,
Դու էիր՝ ողջ զօրքի՝ հրամանատարը,
Քեզ է պատկանում յաղթութեան փառքը:

Մարդկային միտք կշվարի՝ քանի լիշէ քու քաջութիւն,
Դու միշտ անձամբ. խառնվելես արիւնուշտ պատերազմում.
Հէջ չի ծնվել՝ մահկանացու՝ քեզ նման պատերազմող
Յիսուն և մէկ յարձակմանց մէջ՝ քեզի նման յաղթանակող:

Քսան և չորս պատերազմում՝ միշտ եղել ես դու զօրավիդ,
Սպի և վէրք չես ստացել՝ այսքան խառն պատերազմում.
Քեզ՝ ովկ կարէ լինիլ նման՝ հերոսների մեծ անցքերում.
Հայկայ քաջի պատկերն ունէիր իսկ հոգւով էիր անըն-
[կճելի]:

Նման դիւցազն Աքելլիայ՝ մեծ Տրոիտական պատերազմի.
Վեհանձն ոգի և սիրտ ունիս՝ նման առիւծ՝ զայլ Վահանի
Որ փոքր զօրքով՝ սարսափ ձգէր՝ արիւնարբու պարսից գնտի
Դու նման ես Կուտուզովի՝ Բորոտինեան քաջ չերոսի.

Որ հնարիւք յաղթող գտաւ՝ Պոնապարտեան նապալեօնի
Դու հնարքով՝ շատ նման ես, Գարիբալտի զօրապետի,
Որոյ ուազմական հանճարն՝ ակնյալոնի է համայն ազգի:
Արիական քու զործքերը՝ կկարօտի պատմաբանի.
Մոռանալ չի կարելի քո քաջութիւնք անպարտելի:

Քեզի յիշում է համայն մեծ աշխարհ,
Որպէս աննման՝ գործուն ու հանճար:
Որովհետև դու՝ միակը եղար.
Որ կեանքիդ մէջը՝ հանգիստ չ'ունեցար:

Քո ելկրին տուած՝ ծառայութիւնը,
Բիւր քրիստոնէից՝ ազատութիւնը,
Խելօք ու խոհեմ քո վարչութիւնը,
Զի մոռանալու՝ ողջ մարդկութիւնը:

Բայց ափսոս հիմիկ՝ որ անգութ մահը՝
Խլեց մեղանից՝ քո անգին կեանքը
Անհամար սրտեր՝ խուզ վարակեց
Մեր փառքն ու պարձանք՝ ի դերև հանեց:

Մեծ սուզ է պատել՝ ողջ չայոց աղզը,
Զի բարձաւ զլխից՝ պարծանաց թագը,
Սգում է զիրակ, Արտազ և Տղմուտ
Կարեվեր խոցի՝ ի կորուստ որդւուդ:

Երկնաճէմ՝ վիթխարի՝ լեառն Արարատ.
Ի մահ սգալի՝ որդւոյդ հարազատ.
Հառաջէ հեծէ՝ ցաւօք վշտահար,
Լայ անմխիթար՝ կոծէ անդադար:

Կայլակս արտասուաց՝ հոսէ ծովանման՝
Ի սուգ համակէ՝ ամբողջ չայստան,
Լայ անմխիթար՝ բարձրաձայն գոչէ.
Եւ զցաւ իւր սրտին բռւժել ոչ բաւէ:

Ճատ ասէ, տարիք՝ և դարեր անցին,
Բայց այսպէս դիւցազն երևան չեկին
Ել դժուար ծնվի՝ այսպէս քաջ որդի
Որ սրտիս վէրքերն բուժի զովացնի:

Թող հայոց ազգն կանդնի մէկ արձան՝
Արձան՝ անմոռաց՝
Որ դարուց 'ի դարս՝ լիշէ անմոռաց
Հայասեռ ազանց՝
Եւ ճակատ նորին՝ դրոշմի քանդակին
Ռոկեալ տարերով

Այս է սխրալի՝ ցանկալի արձան՝
Դիւցազն՝ Միքայէլ Լօրիս Մելիքեան
Յոյժ հաւատարիմ՝ Ոուսաց տէրութեան
Փառք և պարձանք հայոց ազգութեան:

Թող հայոց պատմութիւնն՝ քաջերի շարքում
Արձանագիր՝ սորա վեհ անուն
Թող հայոց մանկտին՝ սրտով և հոգւով՝
Անգիր սովորի՝ սորա վեհ անուն:

Այսպէս սգալով՝ Պատիսն հառաջեց՝
Եւ իւր վեհ զլուխն՝ ամպերով ծածկեց
Բայց հառաջանք և թախիծք՝ հայկայ սերնդոց
Սգալին հառաջմամբ՝ անփարատ ցաւօք:

Գուժ մահու քաջին՝ հնչեաց Ոուսաստան,
Նման խիստ ալեաց՝ մարդիկ խմբեցան,
Կայրն մեծազօր՝ Ալէքսանդր երրորդ՝
Յաւակցի՝ սգայ՝ կորուստ սիրելոյդ:

Կայրուհին զթոտ՝ ցաւակցի հեծէ
Եւ զիլշտ լւր սրտին՝ ամուսնոյն զուժէ,
Փառանգն գակին՝ նիկոլայ մեծ իշխան
Զցաւակցութիւն սրտին յայտնէ անզուման:

Մեծ իշխանն Միքայէլ՝ նախկին փոխարքան՝
Պաշտպանն Կովկասու՝ համայն ազգութեան
'ի լուր սրտարէկ՝ բօթաբեր մահուան
Յիշէ հառաջմամբ՝ քո զործք քաջութեան:

Պալատականք համայն՝ կայսերական տան,
Յաւակցին սգան՝ վշտոք անդուման,
Նախարարք համայն՝ ի սուգ վարակին՝
Ի մահ քաջազօր՝ անձիդ թանկադին:

Պալը քո ծերունի՝ ըղձակաթ սիրով՝
Հալ ու մաշ եղե՝ քո տես կարօտով,
Աղէխարշ հառաջմամբ՝ կականս բառնայ
Եւ զգի քաջիդ՝ արտասուօք թանայ:

Նա ապրէր՝ միայն՝ քեզի լիշելով.
Քո աննման պատկերը՝ միտ բերելով,
Ճատ մարդիկ և աղինք՝ նմա տալին երանի
Զի ծնաւ քեզ նման՝ անդրանիկ որդի:

Այս, մօրդ աչքերը՝ մնաց՝ քեզ սպասելով
Քո աննման պատկերին՝ մէկ համբոյր տալով.
Հառաչմամբ նա ասէր՝ կ'լինեմ արժանի
Նորա ձեռքի հողին՝ մէջ գերեզմանի:

Ասա ինձ աղաչեմ՝ իմ անդին բարերար
Իմ քամբախտ անձիս՝ ով է տէր և ճար.
Քու մօր փառքն ու պարձանքն կորաւ՝
Աշխարհ և երկինք նորան խաւրեցաւ:

Սերունդք դիւցազինն՝ չայլազեան սեռի՝
Խրոխտ տուեալ դիմեն՝ ի չայաստան երկրի.
Բազում պսակօք՝ քեզ փութան՝ ի տես,
Էղձակաթ սիրով՝ տալ վերջին հրաժեշտ:

Բնակիչք կովկասու համայն ազանց՝
Քեզ պսակս բերեն՝ յերգներամ ծաղկանց.
Հիւսեն՝ ի ծաղկանց զիրակալ դաշտի՝
Յորում քաջք մարդուցեալք անկան՝ ի մարտի:

Քո գութն ու սէրը ամէնքին գրաւեց
Ճատ անթիւ սրտերից՝ հառաչանք հանեց՝
Որք ողորմ հառաչմամբ կականս բառնան
Եւ զգագաղ քաջիդ արտասուք թանան:

Իսկ ես ով մեծ մարդ, Տէր իմ բարերար,
Որիս վերայ անթիւ խնամք ունեցար,
Ահա դադաղիդ առաջ վշտահար,
Գիմում եմ առ Տէր բարձրեալն արդար:


Ով Տէր ողնոմած, ստեղծող համայնոց,
Ընդունիր սորան ըստ բարի գործոց
Խրոց իդասս բազում արդարոց
Եւ հանգո զհողին ի դասս Արբոց:

Դու յոլժ եռանդով՝ սիրով կատարիր՝
Քեզ յանձնած գործերը՝ աւարտ հասուցիր՝
Մեծ առաքեալի խօսքը կատարիր
Առ Ռուսաց գահին հաւատարիմ եղեր:

Բարոք պատերազմը՝ դու պատերազմեցար.
Քու կենաց ընթացքը սիրով կատարիր:

Հիմայ կոչում է քեզ երկնալին Տէրը
Պարզևելու քեզ անպատում փառքը
Գնա վայելիր՝ այն փառքն ու պսակներ
Որք յաւիտեանս չեն թառամիր:

Հանգիստ ոսկերացդ, բարերար իմ Տէր,
Հանգիստ շիրմիդ՝ որ շատ շատ դարեր,
Հերոսութիւնդ՝ գործերդ անվեհեր.
Անջինջ կ'լիշեն՝ բլւրաւոր սրտեր:



Գիրն է 15 ԿՈՊ.

ՀՀ Ազգային գրադարան



NL0342335

